ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԳՅՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Ա. ԲԱԽՇՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Բախշյան.

Ի պատասխան Ձեր՝ 16.03.2018թ. հ.Ե-3/146 գրության, տեղեկացվում է.

Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի 29.01.2018թ. N1 կարգադրությամբ՝ «Երևանի հ.120 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Արուսյակ Վարդանյանն իր դիմումի համաձայն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Տնօրենի այլ թեկնածու չունենալու պարագայում մանկապարտեզի բնականոն աշխատանքը չխաթարելու նպատակով՝ նույն կարգադրությամբ տնօրենի պաշտոնակատարի պարտականությունները ժամանակավորապես դրվել են մեթոդիստ, ուսումնական գծով տնօրենի տեղակալ Դիանա Մուրադյանի վրա՝ հաշվի առնելով նախադպրոցական կրթության ոլորտում նրա փորձը, գիտելիքներն ու հմտությունները:

Ինչ վերաբերում է, որ Դիանա Մուրադյանի աշխատանքային գրքույկում կարգադրություններն ամրագրված չլինելուն, տեղեկացվում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգքի 90-րդ հոդվածն ուժը կորցրած է ճանաչվել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 22.06.2015թ. ՀՕ-96-Ն ՀՀ օրենքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ